# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունվարի 29-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակյանին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց ՀԲԸՄ լայնածավալ ազգանպաստ գործունեությանը Սփյուռքի հայ համայնքներում եւ Հայրենիքում, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ սերտ համագործակցությանը եւ քննարկվեց համատեղ իրականացվող ծրագրերի ընթացքը:

Ողջունելով ՀԲԸՄ նախագահի այցը ամենայն հայոց հոգեւոր կենտրոն՝ Նորին Սրբությունը, ի դեմս տիար Պերճ Սեդրակյանի, գոհունակություն հայտնեց ՀԲԸՄ անդամների կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ դրսեւորվող նվիրումի եւ աջակցության համար, որի շնորհիվ Մայր Աթոռը առավել բարեզարդվում է, ինչպես նաեւ շարունակում է իրականացնել մի շարք կրթական եւ սոցիալական ծրագրեր: Հայապահպանության եւ հայորդիների քրիստոնեական, հայեցի դաստիարակության գործում Վեհափառ Հայրապետը մեծապես կարեւորեց ՀԲԸՄ գործակցությունը Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերի հետ:

Իր խոսքում Նորին Սրբությունը նաեւ մասնավոր գնահատանք հայտնեց ՀԲԸՄ նախագահին եւ իր տիկին Վերա Սեդրակյանին, ում ազնիվ բարերարությամբ Մայր Աթոռում ներկայիս ընթանում են Հին Վեհարանի հիմնանորոգության եւ վերակառուցման աշխատանքները:

Իր հերթին ՀԲԸՄ նախագահը Նորին Սրբությանը ներկայացրեց Միության բազմաթիվ ծրագրերը, այդ թվում նաեւ Երեւան քաղաքում ՀԲԸՄ կենտրոնի կառուցման ընթացքը՝ վստահություն հայտնելով, որ այն մեծապես պիտի նպաստի գործունեության ընդլայնմանը: Տիար Պերճ Սեդրակյանը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց Սփյուռքի տարբեր համայնքների վիճակի եւ թեմական կառույցների հետ ձեւավորված գործակցության մասին: Նա նաեւ ընդգծեց, որ ՀԲԸՄ ներկայիս գործունեության մեջ հիմնականում ուշադրություն է դարձվում երիտասարդ սերնդին, նրա հայրենասիրական ոգու կերտմանը, ազգային ինքնության ամրապնդմանը, որով հայ համայնքներում իրականացվում են բազմաբնույթ ծրագրեր, ինչպես օրինակ՝ համացանցի միջոցով

հայոց լեզվի ուսուցում եւ բազում այլ նախաձեռնություններ, նաեւ կազմակերպվում են ամառային ճամբարներ եւ Հայրենիք այցելություններ: ՀԲԸՄ նախագահը Միության անդամների անունից վերստին որդիական սերը հայտնեց Հայ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ՝ վստահեցնելով, որ Միությունը շարունակելու է ըստ ամենայնի նպաստել Հայ Եկեղեցու առաքելության իրագործմանը հայ ժողովրդի կյանքում:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀԲԸՄ նախագահին մաղթեց արդյունավետ գործունեություն հանուն Հայաստանի եւ Արցախի բարգավաճման, Սփյուռքի հայ համայնքների ազգային կյանքի զորացման, մեր ժողովրդի բարօրության եւ նվիրական իղձերի իրականացման:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ